



Որակյալ առողջապահական ապահովագրության գրանցումը Քայլ-առ-քայլ ուղեցույց

Գրանցումը բաց է
նոյեմբերի 15, 2014թ.-
փետրվարի 15, 2015:



Որպեսզի
ապահովագրությունը
սկսվի հունվարի 1,
2015թ., գրանցվեք
մինչև դեկտեմբերի
15, 2014թ.:

Covered California™-ում կարող եք համեմատել և գրանցվել մասնավոր առողջապահական ապահովագրության ծրագրերին, և որակավորվելու դեպքում՝ ֆինանսական օգնություն ստանալ առողջապահական ապահովագրությունը վճարելու համար: Այս ուղեցույցը կօգնի Ձեզ ավելի լավ հասկանալ Ձեր ընտրությունները և գրանցվել Ձեր կարիքներին համապատասխանող լավագույն առողջապահական ծրագրին:

ՔԱՅԼ 1՝ տեսեք, թե արդյոք որակավորված եք հարկային վարկ ստանալու համար:

Առողջապահական ապահովագրությունը Ձեզ պաշտպանում է կյանքի պատահարներից և հոգու հանգստություն է բերում, բայց մեզանից շատերը մտահոգված են գնի մասին: Չարկային վարկի տեսքով ֆինանսական օգնությունը հասանելի է այն մարդկանց, ովքեր համապատասխանում են ընտանիքի չափի և եկամտի հիման վրա: Գումարը հիմնված է սահող սանդղակի վրա՝ ինչը նշանակում է, որ ինչքան ցածր է Ձեր եկամուտը, այնքան ավելի շատ օգնություն կարող եք ստանալ: Եթե դուք չեք բավարարում ֆինանսական օգնության պահանջարկները, միևնույն է կարող եք առողջապահական ապահովագրությանը գրանցվել Covered California-ի միջոցով:

Տեսեք ստորև աղյուսակը կամ այցելեք Shop and Compare Tool-ը CoveredCA.com կայքէջում պարզելու համար, թե որքան կարող է Ձեր ծրագիրն արժենալ, և իմանալու համար, թե արդյոք Դուք որակավորված եք ֆինանսական օգնություն կամ Medi-Cal ստանալու համար:

Տեսեք, թե արդյոք որակավորված եք ֆինանսական օգնություն ստանալու համար՝



Մարդկանց քանակը
Ձեր ընտանիքում




Եթե Ձեր 2016թ.
ընտանեկան եկամուտն
ավելի ցածր է, քան՝



Եթե Ձեր 2016թ.
ընտանեկան եկամուտը
հետևյալի միջև է՝

	Եթե Ձեր 2016թ. ընտանեկան եկամուտն ավելի ցածր է, քան՝	Եթե Ձեր 2016թ. ընտանեկան եկամուտը հետևյալի միջև է՝
1	\$16,243	\$16,243 – \$47,080
2	\$21,984	\$21,984 – \$63,720
3	\$27,725	\$27,725 – \$80,360
4	\$33,466	\$33,466 – \$97,000
5	\$39,206	\$39,206 – \$113,640
	Դուք կարող եք որակավորվել Medi-Cal-ի	Դուք կարող եք որակավորված լինել Covered California-ի միջոցով ֆինանսական օգնություն ստանալու ապահովագրություն գնելու համար

Որակյալ առողջապահական ապահովագրության գրանցումը Քայլ-առ-քայլ ուղեցույց



Եթե Դուք որակավորված եք Medi-Cal-ի համար՝
Medi-Cal-ը հասարակական առողջապահական ծրագիր է, որը ծառայում է սահմանափակ եկամտով կալիֆոռնիացիների համար:

Եթե որակավորված եք, ապա այցելեք CoveredCA.com կայքէջը դիմելու համար Ձեր տեղական տարածաշրջանի սոցիալական ծառայությունների գրասենյակներում:
Կարող եք նաև գործ ունենալ Covered California-ի հավաստագրված գրանցման խորհրդատույի կամ գործակալի հետ, ով կօգնի Ձեզ գրանցվել Medi-Cal-ում:

ՔԱՅԼ 2՝ հետազոտեք ապահովագրության Ձեր ընտրությունները:

Covered California-ն մի շարք ծրագրեր է առաջարկում, այնպես որ կարող եք ընտրել այն, որը լավագույնս է համապատասխանում Ձեր առողջապահական կարիքներին և բյուջեին:

Մինչև ծրագիրն ընտրելը, հաշվի առեք հետևյալ գործոնները՝

Ինչ մակարդակի ապահովագրության կարիք ունեք Դուք և Ձեր ընտանիքը: Covered California-ն մի շարք ծրագրեր է առաջարկում, որոնցից կարող եք ընտրել հիմնված Ձեր ընդհանուր առողջության և ֆինանսական կարգավիճակի վրա: Սիա որոշ հանգամանքներ, որ պետք է հաշվի առնեք ծրագիրն ընտրելիս:

- **Ապահովագրության մակարդակը՝**
 - **Ընտրեք Պլատինում կամ Ոսկի,** եթե Ձեզ ավելի շատ խնամք է հարկավոր: Այդ ծրագրերը ավելի բարձր ամսական վճարում ունեն, այնպես որ, երբ Ձեզ հարկավոր է բժշկական ծառայություն, Դուք կարող եք ավելի քիչ վճարել:
 - **Ընտրեք Արծաթ կամ Բրոնզ,** եթե առողջ եք և շատ խնամքի կարիք չունեք: Այդ ծրագրերով, կարող եք ամսական ավելի քիչ վճարել, սակայն կվճարեք ավելի շատ, երբ բժշկական ծառայությունների կարիք ունենաք: Երբևէ համար, ովքեր որակավորված են, ուժեղացված Արծաթ ծրագրերը նույնպես առաջարկում են ավելի ցածր գրպանից վճարումներ:
 - **Նվազագույն ապահովագրության ծրագիրը** նույնպես հասանելի է 30-ից ավելի երիտասարդ մարդկանց կամ նրանց համար, ովքեր կարող են ապացուցել, որ դժվարություն են կրում: Այս ծրագրերը ունեն ցածր ամսական հավելավճարներ և պաշտպանում են վատագույն տարբերակներից: Դուք չեք կարող օգտվել ֆինանսական օգնությունից, որպեսզի վճարեք նվազագույն ապահովագրության ծրագրի համար:
- **Ավնկավոր արժեքը՝**
 - Երբ մի ծրագիր եք հաշվի առնում, համոզվեք, որ լիովին հասկանում եք հավելավճարները, նվազեցումները, վճարակցումները և գրպանից վճարման սահմանափակումները, որոնց համար Դուք պատասխանատու կլինեք, թե ինչ տեսակի ծառայություններ են ընդգրկված և, արդյոք Ձեր ներկա բժիշկները ընդունում են այդ ապահովագրությունը:

Ստանդարտ ապահովագրության նպաստներն՝ ըստ մակարդակի

Ֆրոնդն ապահովագրում է միջին տարեկան արժեքի 60%-ը	Արծաթն ապահովագրում է միջին տարեկան արժեքի 70%-ը	Ոսկին ապահովագրում է միջին տարեկան արժեքի 80%-ը	Պլատինումն ապահովագրում է միջին տարեկան արժեքի 90%-ը	
Ֆինանսական նպաստները				
Նվազեցումը	\$6,000	\$2,000***	ոչ մի նվազեցում	ոչ մի նվազեցում
Տարեկան կանխարգելիչ խնամքի այցելություն	անվճար	անվճար	անվճար	անվճար
Առաջնային խնամքի այցելության վճարակցում	\$70 *1-ինից՝ 3-րդ այցելությունները	\$45	\$30	\$20
Հրատապ խնամքի այցելության վճարակցում	\$120 *1-ինից՝ 3-րդ այցելությունները	\$90	\$60	\$40
Շտապ օգնության վճարակցում	\$300	\$250	\$250	\$150
Առանց դեղատոմսի դեղորայքի վճարակցում	\$15 կամ պակաս	\$15 կամ պակաս	\$15 կամ պակաս	\$5 կամ պակաս
Տարեկան գրպանից վճարում Առավելագույնը մեկի համար	\$6,250	\$6,250	\$6,250	\$4,000
Տարեկան գրպանից վճարում Առավելագույնն ընտանիքի համար**	\$12,500	\$12,500	\$12,500	\$8,000

Աղյուսակը չի ներառում բոլոր բժշկական վճարակցումները և համա-ապահովագրման դրույքաչափերը: Լրիվ տեղեկությունների համար այցելեք www.CoveredCA.com.
 * Բրոնզե ծրագրերի համար, նվազեցումը հանվում է առաջին երեք առաջնային խնամքի կամ հրատապ խնամքի այցելությունների համար: Լրացուցիչ այցելությունները կգանձվեն լրիվ գնով մինչև հասնեն նվազեցման արժեքին:
 ** Տարեկան գրպանից վճարման առավելագույնը ընտանիքին պատկանող անհատի համար չի կարող գերազանցել ամբողջ ընտանիքի տարեկան գրպանից վճարման առավելագույնի կեսը:
 *** Արծաթը միակ մակարդակն է, որտեղ Ձեր նվազեցման և այլ ծախսերը կարող են ավելի ցածր լինել՝ հիմնված Ձեր ընտանեկան եկամտի վրա:

Տարբեր ապահովագրությունների մակարդակների ամբողջական բացատրության և Ձեր ընտրությունները հետազոտելու համար՝ այցելեք www.CoveredCA.com կայքէջը:



Ինչ մատակարար ցանցեր են հասանելի Ձեր տարածքում: Covered California-ն վստահելի մատակարարների մասնավոր ապահովագրական ծրագրերի շուկան է: Չնայած բոլոր ապահովագրական ընկերություններն առաջարկում են ապահովագրության նույն մակարդակը, նրանք առաջարկում են ծրագրի տարբեր տեսակներ և մատակարարների ցանցեր (բժիշկներ և հիվանդանոցներ Ձեր տարածքում, որոնք ընդունում Ձեր ապահովագրությունը): Եթե դուք ցանկանում եք շարունակել այցելել Ձեր ներկա բժիշկներին, պարզեք, թե որ ծրագրերն են նրանց ներառում իրենց ցանցում:

Ինչ տեսակի ծրագիրն է լավագույնը Ձեր ընտանիքի համար: Ապահովագրական ընկերությունների մեծ մասն առաջարկում է երեք տեսակի ապահովագրության ծրագիր՝ Առողջության սպասարկման կազմակերպությունները (HMO), նախընտրելի մատակարար կազմակերպությունները (PPO) և բացառիկ մատակարար կազմակերպությունները (EPO): Ծրագրերի այս տեսակները սահմանում են, թե որ բժիշկներին և հիվանդանոցները կարող եք այցելել և, թե ինչպես կարող եք մուտք գործել որոշակի առողջապահական ծառայություններին:

- **HMO**-ները միայն ընդգրկում են ծրագրի ցանցում գտնվող բժիշկների և հիվանդանոցների այցելությունները: HMO-ները հաճախ պահանջում անդամներին ուղղորդում ստանալ իրենց առաջնային խնամքի բժշկից՝ մասնագետին այցելելու համար:
- **PPO**-ները վճարում են ծրագրի ցանցում գտնվող և չգտնվող բժիշկներին այցելությունների համար, սակայն անդամները ցանցից դուրս խնամքի ծախսերի համար առավել բարձր գումար են վճարում:
- **EPO**-ները՝ ընդհանուր առմամբ, չեն ընդգրկում ծրագրի ցանցից դուրս տրվող խնամքը, սակայն անդամներին ուղղորդում հարկավոր չէ ցանցում գտնվող մասնագետին այցելելու համար:

Կարևոր է հիշել, որ ոչ բոլոր PPO-ները, HMO-ները և EPO-ներն են նույնը: Համոզվեք, որ ընտրելուց առաջ ստանաք ծրագրի վերաբերյալ բոլոր մանրամասները, օրինակ՝ թե որ բժիշկներն ու հիվանդանոցներն են ընդգրկված, և, թե ինչ կարծես ցանցից դուրս բժիշկին այցելելը:

ՔԱՅԼ 3՝ ստացեք Ձեզ հարկավոր տեղեկատվությունը:

Երբ որ ընտրեք Ձեզ համապատասխան ծրագիրը, այդ ժամանակ պետք է սկսել գրանցման գործընթացը: Համոզվեք, որ պատրաստ ունենաք ճիշտ փաստաթղթերը և տեղեկությունները, երբ դիմելիս լինեք:

Յուրաքանչյուր ընտանիքի անդամ, ով ընդգրկվելու է առողջապահական ծրագրում (Ձեզ՝ ներառյալ), պետք է ունենա՝



Եկամտի մասին տեղեկատվություն* - 2014թ. հարկի վերադարձ, վերջին աշխատավարձի ստացականը և/կամ W2 ձևաթուղթը:



Ինքնության փաստաթուղթ - Կալիֆոռնիայի վարորդի իրավունք, Կալիֆոռնիայի ID քարտ, ԱՄՆ անձնագիր կամ այլ ID քարտ:



Քաղաքացիության կամ իրավական ներկայության ապացույց - ԱՄՆ անձնագիր, օրինական բնակչի քարտ կամ հպատակագրման փաստաթուղթ

Բացի այդ, բոլոր դիմող ընտանիքի անդամների համար, պետք է իմանալ՝



Սոցիալական ապահովության համարները**



Ծննդյան ամսաթվերը



Տան հասցեյի ինդեքսը

Ապահովագրվելը ոչ միայն լավագույն ընտրությունն է Ձեր առողջության համար, այլ նաև օրենքն է:



Սկսած 2014 թ. հունվարից, մարդկանց մեծ մասը պարտավոր կլինի կամ առողջապահության ապահովագրություն ունենալ, կամ էլ՝ հարկային տուգանք վճարել:

2015 թ. տուգանքը կլինի Ձեր տարեկան ընտանեկան եկամտի 2 տոկոսը կամ \$325 յուրաքանչյուր չափահասի համար (և \$162.50 յուրաքանչյուր մինչև 18 տարեկան երեխայի համար), որը ավելի բարձր կլինի:

* Ընտանիքի բոլոր դիմող անդամների ներկա եկամտի ապացույց: (Կախյալի եկամուտը միայն պետք է ներառվի, եթե նրանց եկամտի մակարդակը պահանջում է, որ նրանք հարկային վերադարձ լրացնեն): Ընտանիքը սահմանվում է որպես այն անձը, ով հարկեր է լրացնում՝ որպես ընտանիքի ղեկավար և բոլոր կախյալները այդ անձի հարկերում նշված են: Եթե Դուք չեք լրացնում հարկեր, Դուք այնուամենայնիվ կարող եք որակավորվել անվճար կամ ցածր գնի ապահովագրության Medi-Cal-ի միջոցով

** Ընտանիքները, որոնք ներառում են ապօրինի ներկա ներգաղթյալներ կարող են դիմել: Դուք կարող եք դիմել Ձեր երեխայի համար, նույնիսկ եթե Դուք իրավասու չեք ապահովագրությանը:



ՔԱՅԼ 4՝ հաշիվ բացեք և գրանցվեք:

Դուք կարող եք առցանց գրանցվել Ձեր ծրագրում՝ www.CoveredCA.com կայքէջում: Ձեզ միայն հարկավոր է ստեղծել օգտագործողի հաշիվ և հետևել գրանցման գործընթացին այն տեղեկատվությամբ, որը հավաքել էիք Քայլ 3-ում:

Եթե օգնության կարիք ունեք գրանցվելու համար, ապա Covered California-ն առաջարկում է անվճար, գաղտնի օգնություն Ձեր մոտակայքում: Տեղական օգնություն գտնելու համար, գնացեք՝ www.CoveredCA.com/enrollment-assistance և մուտքագրեք Ձեր ինդեքսը: Կարող եք նաև զանգահարել մեզ՝ (800) 300-1506 հեռախոսահամարով:

ՔԱՅԼ 5՝ խնայեք կարևոր տեղեկատվությունը:

Եթե ապագայում հարց ունենաք Ձեր ապահովագրության վերաբերյալ, կարևոր է պահպանել Ձեր դիմումից և ապահովագրական ծրագրից որոշակի անունների և համարների գրանցումը: Անպայման գրեք այդ կարևոր տեղեկություններ:

Ձեր ԴԻՄՈՒՄԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԹԻՎԸ

Ձեր ԱՊՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԸ

Ձեր ԳՈՐԾԻ ԹԻՎԸ

Ձեր ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ԾՐԱԳՐԻ ԹԻՎԸ, ԽՄԲԻ ԹԻՎԸ ԵՎ ԱՅԼՆ)

ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ԳՐԱՆՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒՅԻ (CEC), ՀԱՎԱՍՏԱԳՐՎԱԾ ԱՊԱՅՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼԻ ՎԱՍ ԾՐԱԳՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԳՐԱՆՑՈՂԻ (PBE), ՈՎ ՁԵՁ ՕԳՆԵԼ Է ԳՐԱՆՑՎԵԼ, ԱՆՈՒՆԸ ԵՎ ԿՈՆՏԱԿՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

ՔԱՅԼ 6՝ վճարեք Ձեր հավելավճարը:

Ամեն ամիս, վճարեք Ձեր ապահովագրական հավելավճարը իր ժամկետին Ձեր ընտրած առողջապահական ապահովագրական ընկերությանը, և ոչ թե՛ Covered California-ին:



Լրացուցիչ տեղեկությունների կամ անվճար, գաղտնի տեղական օգնություն գտնելու համար, խնդրվում է դիմել՝



<FirstName> <LastName>



<Email>




<Telephone>

CoveredCA.com | (800) 300-1506

Լրացուցիչ հարցեր

Դիտեք մեր “Բարի գալուստ պատասխաններին” տեսաշարանը՝ CoveredCA.com/FAQs-ում



(Նշում՝ “Welcome to Answers” մի տեղեկատվական տեսահոլովակ է՝ հասանելի միայն անգլերեն լեզվով)

Թեմաները ներառնում են՝

- Ի՞նչ է Covered California-ն:
- Ինչպե՞ս գրանցվեմ:
- Ինչպե՞ս կարող է Covered California-ն օգնել 30 տարեկանից ավելի երիտասարդներին:
- Ինչպե՞ս է Covered California-ն ապահովագրությունն ավելի մատչելի դարձնում:
- Ինչպե՞ս է Մատչելի խնամքի մասին օրենքը փոփոխում առողջության ապահովագրությունը:



Թարգմանիչները հասանելի են այն զանգահարողներին, ովքեր այլ լեզուների օգնության կարիք ունեն: